ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA#

#

#

25.05.2016թ.
285-ի 6

Ժառանգություն կուսակցության
նախագահ պարոն Ռաֆֆի Հովհաննիսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի, “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի եւ “Կուսակցությունների մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի (հրապարակայնության սկզբունքի) դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ժառանգություն կուսակցությունը 2015թ.-ի ընթացքում ի՞նչ աղբյուրներից է ֆինանսավորում ստացել եւ յուրաքանչյուր աղբյուրից՝ որքա՞ն:
2. Խնդրում ենք տրամադրել Ժառանգություն կուսակցության՝ 2015թ.-ի ֆինանսական հաշվետվության պատճենը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան